

Ուղեցույց դպրոցի պատասխանատուի համար

**ՄԵՂՈՒ
2019**

1. Բոլոր դիտորդներին ծանոթացրեք մրցույթի պայմաններին և բացատրեք իրենց անելիքը:
2. Մրցույթը պետք է **մեկնարկի 12:00-14:00** ժամանակահատվածում:
3. Մասնակիցներին հերթական համարը թելադրելիս և ներկա-բացակա կատարելիս օգտվեք **մասնակիցների միայն այն ցուցակից, որն ուղարկվել է «Այբ»-ի կողմից մրցութային փաթեթի հետ:**
4. Նստեցրեք երեխաներին **առանձին-առանձին**: Եթե դա հնարավոր չէ, կողք կողքի նստեցրեք տարբեր (ուչ հարակից) տարիքային խմբերի երեխաների:
5. Բոլոր մասնակիցներին բաժանեք հուշանվերները՝ **մեկական** գրիչ և հուշանվեր-դասացուցակ:
6. Բաժանեք պատասխանների թերթիկները:
7. Բացատրեք, թե ինչպես է պետք լրացնել պատասխանների թերթիկի վերին հատվածը: Դպրոցի ծածկագիրը գրեք գրատախտակին:
8. Յուրաքանչյուր մասնակցի թելադրեք նրա հերթական համարը՝ ըստ **մասնակիցների՝ «Այբ»-ի տրամադրած ցուցակի**: Ցանկալի է օգնել փոքրերին՝ գրելու դպրոցի ծածկագիրը և հերթական համարը:
9. Դպրոցի ծածկագիրը և հերթական համարը մուտքագրելիս **թվերը գրեք շատ պարզ**՝ «նկարե՛ք», որպեսզի համակարգիչը ճիշտ հասկանա դրանք:
10. Յուրաքանչյուր երեխա գրում է իր, այսինքն՝ այն դպրոցի ծածկագիրը, որի ցուցակներում ինքն ընդգրկված է: Միացող դպրոցների երեխաներն էլ գրում են իրենց դպրոցի ծածկագիրը:
11. Ներկայացրեք մրցույթի հիմնական կանոնները՝ **չարտագրել, չօգտվել որևէ ձեռնարկից կամ հեռախոսից, հետևել ժամանակին, չձեռնարկել չանել**:
12. Համոզվեք, որ բոլոր երեխաները **պատշաճ կերպով** լրացրել են անհրաժեշտ տվյալները և պատրաստ են սկսելու մրցույթը:

13. Միայն դրանից հետո երեխաների աչքի առաջ բացեք **խնդիրների ծրարը**: Գրատախտակի վրա գրեք ծրարը բացելու (այն է՝ մրցույթը սկսելու) և մրցույթի ավարտի ժամերը:
14. Բուն մրցույթի տևողությունը **75 րոպե** է:
15. Բաժանեք խնդիրներն ըստ տարիքային խմբերի:
16. Քակի դեռ ընթանում է մրցույթը, կատարեք երեխաների ներկա-բացակա՝ **օգտվելով մասնակիցների՝ «Այբ»-ի տրամադրած ցուցակից**: Գրիչով ավելացրեք նոր մասնակիցների անունները ցանկի վերջում և ջնջեք բացակա կամ սխալմամբ ընդգրկված երեխաների անունները: Ստուգեք երեխաների անուն-ազգանուն-հայրանունների ուղղագրությունը և ուղղեք բոլոր անճշտությունները:
17. Մրցույթի ավարտից անմիջապես հետո հավաքեք պատասխանների լրացված թերթիկները, խմբավորեք և դասավորեք՝ ըստ հերթական համարների աճման (խնդիրները մնում են երեխաների մոտ): Նույն ծրարի մեջ դրեք՝
 - լրացված պատասխանների թերթիկները,
 - մասնակիցների՝ «Այբ»-ի տրամադրած ցուցակ(ներ)ը,
 - նոր մասնակիցների անդորագրերը:
18. Լրացրեք ծրարին փակցված արձանագրությունը, ծրարը փակեք ու կնքեք, ապա ստորագրեք նրա վրա:
19. **Մինչև ժամը 17:00-ն** փակ ծրարը վերադարձրեք այն նույն տարածքային կենտրոն, որտեղից վերցրել եք մրցույթի փաթեթը: Ժամը 17:00-ից հետո **ԾՐԱՐՆԵՐ ՉԵՆ ԸՆԴՈՒՆԱԿ**:

Ուղղումներ կատարելիս երեխան նշում է ուղղվող խնդրի համարը, ապա՝ ընտրված պատասխանը: Ջնջումներ չանել:

Օրինակ՝

	խնդրի համարը	Ա	Բ	Գ	Դ	Ե
ուղղում 1	5			<input checked="" type="checkbox"/>		

Համակարգիչն այս երկու տողով է ճանաչելու յուրաքանչյուր երեխայի: Ուստի զգուշացրեք երեխաներին, որ **հնարավորինս պարզ ու ընթեռնելի** լրացնեն այս թվերը:

Օրինակ՝

Դպրոցի ծածկագիր	1	2	3	4	5	6	7
Համարը՝ ըստ ցանկի	1	7					

Մրցույթի մասնակցի համարը ինացեք

«Մեղու» հայերեն օրոգիի համարը
www.megnu.am

Այբ
Կրթական Ինստիտուտ

Պատասխանների լրացման թերթիկ

Ազգանուն և անուն լրացրեք **ԸՆԹՈՒՆԵԼ**: Դպրոցի ծածկագիրը և ցանկում Ձեր համարը լրացրեք **ԹԻՆԻՒՎ**: Ցուցակային կանոններում գրեք միայն մեկ տառ կամ թիվ: Օգտագործեք միայն **ՄՈՐԳ ԿՎՐՈՒՑՑ** կամ **ՄԵՂՈՒ** գրիչ: Դասարանը կրթե -ով:

Ազգանուն

Անուն

Դպրոցի ծածկագիր

Համարը՝ ըստ ցանկի

Դասարան

Պատասխաններ

Խնդրի համարին համապատասխանող սյունում -ով կրթե պատասխանի ընտրված տարբերակը: Ցուցակային կարգով սխալ է կրթի միայն **ՄԵՂՈՒ** գրիչով: **ՉՆՈՒՄՆԵՐ ՄՆԵՆ ԱՐԳՆԵՐՈՒ Մ:**

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Ա	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	Ա	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	Ա	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
Բ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	Բ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	Բ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
Գ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	Գ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	Գ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
Դ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	Դ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	Դ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
Ե	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	Ե	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	Ե	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30

Ա Ա Ա

Բ Բ Բ

Գ Գ Գ

Դ Դ Դ

Ե Ե Ե

Ուղղումների դաշտ

Գրեք ուղղվող խնդրի համարը, ապա՝ միջոց պատասխանի տարբերակը: Դուք ունեք ուղղման ստալիկադրակը 3 հնարավորություն:

Ուղղելու վերջնական պատասխան ընտրվելում է ուղղումների դաշտում կրթված տարբերակը:

Եթե ցանկանում եք կրթել մեջ **«Մեղու»**-ի և **«Այբ»** Ինստիտուտի հետ, կրթե Ձեր էլեկտրոնային հասցեն (e-mail):

Երեխան, ցանկության դեպքում, լրացնում է իր էլեկտրոնային փոստի հասցեն: